

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-02-2025 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ ԿԱՐԱՊԵՏ ՈՒԼՆԵՑՈՒ 31	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.02351	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2000-09-13	
1.5 ՀՎՀՀ-ն	00846441	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10501560	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.atdf.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	atdf@atdf.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ Կառավարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Սարգիս Բաղինյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	151	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր / ՀԲ	5,285,120,307
	Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր / ԱԶԲ	3,678,520,439
	Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր / ԱԶԲ	14,945,764,838

	Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր / ՀԲ	6,062,494,414
	(USAID) աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագիր	299,127,731
	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր / Եվրասիական զարգացման բանկ	268,536,581
	Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիր / Զարգացման ֆրանսիական գործակալություն	2,163,980,111
	Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1 ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկ	745,039,656
	Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 2 ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկ	741,116,490
	ՋՌՀԿ Ախուրյան գետ Փուլ 1 Կապսի ջրամբարի և ոռոգման ինքնահոս համակարգի կառուցում BMZ- 2014 67 950 19122014թ ծրագրի շրջանակներում փորձագիտական ծառայությունների ֆինանսավորման համար Գերմանիայի կառավարության 13998 հատուկ ֆոնդից ֆինանսական աջակցություն / Վերակառուցման վարկերի բանկ	15,594,797
	Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում փուլ 1 ծրագրով Ջրածոր գյուղի վերաբնակեցման գործողությունների ծրագիր	74,727,857
	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր / Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագիր	1,024,292,697
	Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր / Եվրոպական ներդրումային բանկ	1,553,753,679
	Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկ	2,686,641,911
	Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք դրամաշնորհային ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկի և Եվրամիության հարևանության գործիք	136,885,633

	Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագիր /Եվրոպական ներդրումային բանկ	2,513,116,311
	Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 2 Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագիր	38,119,289
	Համայնքների պոլիկլինիկաների տեխնիկական վերազինում	7,370,000
	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հրատապ լուծում պահանջող աշխատանքներ	75,680,240
	Մաքրման կայանների պահպանություն	16,986,000
	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում որոշ վայրերում	900,680,300
	Մարզական օբյեկտների շինարարություն	169,335,700
	«Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում	27,089,687
	Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում	149,994,023
	Մանկապարտեզների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում	173,505,925
	Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում	9,595,467,038
	Հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում	197,202,719
	Կրթահամալիրների կառուցում	6,854,068,887
	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	343,412,931
	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի համակարգման շրջանակներում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	10,802,209
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ԼՖ ծրագիր	5,098,626,111	
Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր / ԱԶԲ	1,301,644,513	
Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր / ԱԶԲ	12,769,838,008	
Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր / ՀԲ	5,837,956,459	
(USAID) աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագիր	228,642,941	
Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր / Եվրասիական զարգացման բանկ	1,408,521,858	
Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիր / Զարգացման ֆրանսիական գործակալություն	2,049,589,328	
Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1 ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկ	745,039,656	
Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 2 ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկ	741,116,490	
ՋՌՀԿ Ախուրյան գետ Փուլ 1 Կապսի ջրամբարի և ոռոգման ինքնահոս համակարգի կառուցում BMZ- 2014 67 950 19122014թ ծրագրի շրջանակներում փորձագիտական ծառայությունների ֆինանսավորման համար Գերմանիայի կառավարության 13998 հատուկ ֆոնդից ֆինանսական աջակցություն / Վերակառուցման վարկերի բանկ	15,594,797	
Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում փուլ 1 ծրագրով Ջրաձոր գյուղի վերաբնակեցման գործողությունների ծրագիր	74,727,857	

Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր / Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագիր	996,498,721
Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր / Եվրոպական ներդրումային բանկ	1,508,599,243
Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկ	2,732,914,108
Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք դրամաշնորհային ծրագիր / Վերակառուցման վարկերի բանկի և Եվրամիության հարևանության գործիք	137,410,703
Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագիր / Եվրոպական ներդրումային բանկ	2,164,567,306
Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 2 Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք ծրագիր	38,119,289
Մանկապարտեզների վերակառուցում որոշ համայնքներում	160,343,012
Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հրատապ լուծում պահանջող աշխատանքներ	73,778,514
Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում որոշ վայրերում	299,600,104
Մարզական օբյեկտների շինարարություն	169,335,700
«Վորքաութ» տեսակի մարզահրապարակների կառուցում	27,089,687
Մանկապարտեզների նոր շենքերի կառուցում	149,994,023
Մանկապարտեզների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում	173,505,925
Հանրակրթական դպրոցների նոր շենքերի կառուցում	9,595,467,038
Հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում	197,202,719
Կրթահամալիրների կառուցում	6,854,068,887

Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ	343,412,931
Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի համակարգման շրջանակներում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	10,802,209
ՀՀ մարզերում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրեր	600,000
Հանրակրթության ծրագիր/ Մանկապարտեզների գույքով ապահովում	184,721,007
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների րնդհանուր չափը	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 37 էջերից:
 էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ք. Երևան
2025թ.

Մույն հաշվետվությունը սկզբնապես պատրաստվել է անգլերեն, իսկ այնուհետև թարգմանվել հայերեն՝ ընթերցողների հարմարության համար: Անգլերեն և հայերեն տարբերակների միջև որևէ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	7
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	9
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	10
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....	10

Հիմնադրամի գտնվելու վայրը՝

ՀՀ, ք. Երևան 0037, Ուլինեցու 31

Իրավական ձևը՝

Հիմնադրամ

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Գործադիր տնօրեն՝

Սարգիս Բաղինյան

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի («ՀՏՁՀ» կամ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, կապիտալում փոփոխությունների, և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ՀՏՁՀ-ի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱՌՄՄ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք ՀՏՁՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների:

Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏՁՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև

Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

30 հունիսի, 2025թ.



Վահագն Մախակյան, FCCA


Տնօրեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ


	Ծնթ.	31.12.2024 ԱՄՆ դոլար	31.12.2023 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	309,719	329,360
Ստացվելիք ֆոնդեր	4	167,724,112	171,491,510
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		168,033,831	171,820,870
Ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ	5	32,862,598	28,999,263
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	16,398,235	12,832,970
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		49,260,833	41,832,233
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		217,294,664	213,653,103
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ			
Հիմնադիրների ներդրումներ	7	151,631	151,631
Կուտակված հավելուրդ / (պակասուրդ)		1,648,597	1,399,891
Ընդամենը կապիտալ		1,800,228	1,551,522
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Շնորհներ կառավարությունից	8	206,594,473	202,311,535
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		204,942,253	202,311,535
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	9	8,899,963	9,790,046
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		10,552,183	9,790,046
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		217,294,664	213,653,103

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-37) ստորագրվել են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Սարգիս Բաղիկյան
Գործադիր տնօրեն




Կարինե Շահբազյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման վարչության պետ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծևթ.	2024 ԱՄՆ դոլար	2023 ԱՄՆ դոլար
Ծրագրային ծախսեր	10	(140,483,213)	(86,731,105)
Եկամուտ շնորհներից	8	140,483,213	86,731,105
Այլ եկամուտ, գուտ		286,717	554,611
Օգուտ/(կորուստ) փոխարժեքային տարբերությունից, գուտ		(38,011)	(697,627)
Տարվա արդյունք մինչև հարկումը		248,706	(143,016)
Շահութահարկ		-	-
Տարվա արդյունք		248,706	(143,016)
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Տարվա համապարփակ արդյունք		248,706	(143,016)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Հիմնադիրների ներդրումներ ԱՄՆ դոլար	Կուտակված հավելուրդ /(պակասուրդ) ԱՄՆ դոլար	Ընդամենը ԱՄՆ դոլար
Առ 1 հունվարի 2023թ.	151,631	1,542,907	1,694,538
Տարվա արդյունք	-	(143,016)	(143,016)
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	151,631	1,399,891	1,551,522
Տարվա արդյունք	-	248,706	248,706
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	151,631	1,648,597	1,800,228

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2024	2023
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված/(վերադարձված) ֆոնդեր		
ՍԱԲԾ (SSIP)	1,034,377	28,795,637
ՍԱԲԾ ԼՖ (SSIP AF)	38,771,162	-
ԶՈՀԿ (IWRM)	4,012,084	13,902,451
ՏՏԵԶ (LEID)	15,545,223	13,228,326
ՈՀԱԾ (ISMP)	678,754	12,253,126
ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)	13,496,691	9,954,973
ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3)	13,905,707	8,233,877
Վեդի (VEDI)	5,508,767	961,343
ԵԶԲԾ (YWIP)	6,625,535	3,472,151
ԱՄՆ ՄԶ (USAID)	769,590	630,932
ՄՆՏԶ (SILD)	-	21,258
ԱՄՆ ՄԶ (USAID)	-	-
Կառավարության նախագծեր	47,031,157	-
Այլ	218,923	1,475,008
	147,597,971	92,929,082
Ծրագրային ծախսեր		
ՍԱԲԾ (SSIP)	(3,265,185)	(31,251,337)
ՍԱԲԾ ԼՖ (SSIP AF)	(32,969,609)	-
ԶՈՀԿ (IWRM)	(4,018,991)	(13,900,794)
ՏՏԵԶ (LEID)	(14,988,811)	(13,037,025)
ՈՀԱԾ (ISMP)	(3,580,872)	(10,256,167)
ՄՆՏԶ ԼՖ (SILD AF)	(13,003,096)	(9,870,442)
ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3)	(13,232,733)	(9,452,038)
Վեդի (VEDI)	(5,285,119)	(5,326,472)
ԵԶԲԾ (YWIP)	(6,441,703)	(3,867,141)
ԱՄՆ ՄԶ (USAID) դրամաշնորհ	(471,584)	(572,248)
ՄՆՏԶ (SILD)	-	(357,817)
ԱՄՆ ՄԶ (USAID)	-	-
Կառավարության նախագծեր	(45,814,729)	-
Այլ	(775,951)	(1,092,508)
	(143,848,384)	(98,983,989)
Այլ գործառնական դրամական միջոցների հոսքեր, զուտ	(278,454)	(292)
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	3,471,133	(6,055,199)
Փոխարժեքային տարբերություններ	94,132	67,131
Դրամական միջոցների զուտ հոսք	3,565,265	(5,988,068)
Դրամական միջոցների մնացորդը տարեկզբին	12,832,970	18,821,038
Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին	16,398,235	12,832,970

Բովանդակություն

1.	Ընդհանուր տեղեկություններ	12
2.	Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ.....	15
3.	Հիմնական միջոցներ.....	23
4.	Ստացվելիք ֆոնդեր	24
5.	Կանխավճարներ	30
6.	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	30
7.	Հիմնադիրների ներդրումներ	31
8.	Դրամաշնորհներ կառավարությունից	32
9.	Կրեդիտորական պարտքեր.....	33
10.	Ծրագրային ծախսեր	34
11.	Հարկեր	37
12.	Դատական հայցեր	37
13.	ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ	37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամը և գործունեությունը

Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամը (ՀՏՁՀ-ը կամ Հիմնադրամ) Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի (ՀՄՆՀ) իրավահաջորդն է 2015թ.-ից սկսած: ՀՏՁՀ-ն 04.08.2015թ.-ից գործունեությունը շարունակում է նոր կանոնադրության հիման վրա՝ շարունակելով ՀՄՆՀ-ի բնականոն գործունեությունը:

ՀՄՆՀ-ն ստեղծվել է 11.04.2000թ. միակ հիմնադիր ՀՀ Կառավարության № 162 որոշման համաձայն՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքներում փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը և կենսամակարդակի բարելավմանը աջակցելու նպատակով: ՀՄՆՀ-ն գրանցվել է 2000թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ Արդարադատության նախարարության № 988 հրամանի համաձայն:

ՀՏՁՀ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0037, Ուլնեցու 31:

ՀՏՁՀ-ն իրականացրել է մի շարք հիմնական ծրագրեր՝ ՀՄՆՀ I, ՀՄՆՀ II, ՀՄՆՀ III, ՄՆՏԶ, ՍԱԲԾ և ՏՏԵԶ, որոնք ուղղված են.

- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Ջարգացման Միջազգային Ընկերակցությունը (ՁՄԸ, IDA), Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկը (ՎՋՄԲ, IBRD) և Ասիական Ջարգացման Բանկը (ԱՋԲ, ADB) հանդիսանում են ամենախոշոր դոնորները, ինչպես նաև համաֆինանսավորվել են ՀՀ Կառավարության, տեղական համայնքների ու այլ հովանավորների կողմից:

1.2 ՋՏՕԻԳ-ի միացում

Համաձայն ՀՀ կառավարության 28.02.2019թ.-ի N 170-Ն և 26.12.2019թ.-ի N 1966-N որոշումների, 2020թ.-ի սկզբից Հիմնադրամին է միացվել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՋՏՕԻԳ) գործունեությունը:

ՋՏՕԻԳ-ի նախկին գործունեությունը շարունակվում է իրականացվել ամբողջությամբ, այդ թվում իր աշխատակազմի և ռեսուրսների միջոցով, որոնք միացվել են ՀՏՁՀ-ին՝ մասնաձյուղի կարգավիճակով:

Համաձայն ՀՏՁՀ հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի օգոստոսի 25-ին կայացած նիստի արձանագրության՝ հաստատվել է ՀՏՁՀ նոր կառուցվածքը, և որոշում է կայացվել դադարեցնել ՀՏՁՀ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» մասնաձյուղի գործունեությունը և հանձնարարվել ՀՏՁՀ-ին ջրային ոլորտի ծրագրերի իրականացումը:

Ջրային ոլորտի հիմնական գործունեության ուղղություններն են.

- Վեղու ջրամբարի և որոգման համակարգի կառուցումը,
- Ոռոգման համակարգերի արդիականացումը,
- Ախտրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարումը,
- Երևանի ջրամատակարարման համակարգի բարելավումը,
- «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» ծրագրի իրականացումը:

Ջրային ոլորտի ծրագրերը ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից՝ հիմնականում միջազգային դոնորներից ստացված ֆոնդերի միջոցներով: Եվրասիական զարգացման բանկը (ԵՋԲ, EDB), Ջարգացման ֆրանսիական գործակալությունը (ՋՖԳ, AFD), Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ, EIB), Վերակառուցման վարկերի բանկը (ՎՎԲ, KfW) հանդիսանում են ամենախոշոր դոնորները: Ծրագրերը համաֆինանսավորվել են ՀՀ Կառավարության և տեղական համայնքների կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1.3. Իրականացված ծրագրեր

31.12.2024թ.-ին ավարտվող տարում, ՀՏՁՀ-ն իրականացրել է հետևյալ հիմնական ծրագրերը.

- **ՄՆՏՁ ԼՃ (SILD AF)**– «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման նախագծի լրացուցիչ ֆինանսավորում»՝ Հայաստանի Հանրապետության և IBRD-ի միջև 2020 թվականի ապրիլի 21-ի թիվ 9060-AM վարկային համաձայնագրի ֆինանսավորմամբ՝ 17,900,000 EUR գումարի չափով: Ծրագրի նպատակն է բարելավել համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակը, օգտագործումը և հասանելիությունը: Ծրագիրն ուժի մեջ է մտել 08.12.2020թ.-ին: Վարկի թիվ 9060-AM ֆինանսավորման փակման ամսաթիվը սահմանվում է 2025թ. մայիսի 31-ին:
- **ՍԱԲԾ (SSIP)** - “Սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագիր”, որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ի և ՀՀ-ի միջև 19.10.2015թ. կնքված ADB Loan Number 3284-ARM վարկային համաձայնագրով՝ 83,600,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է կառուցել երկրաշարժադիմացկուն դպրոցներ և բարելավել բնական աղետներին արձագանքումը: ՍԱԲԾ ծրագրի ավարտը սահմանված է 31.05.2026թ.-ը:
- **SSIP-AF** - «Սեյսմիկ Անվտանգության Բարելավման Ծրագիր-Լրացուցիչ Ֆինանսավորում», որը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության և Ասիական Ջարգացման Բանկի միջև 2023 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4351-ARM վարկային համաձայնագրի ֆինանսավորմամբ (լրացուցիչ ֆինանսավորում վարկային № 3284-ARM(SF))՝ 66,100,000 EUR գումարի չափով: Ծրագրի նպատակն է կառուցել սեյսմակայուն դպրոցներ: SSIP-AF ծրագրի փակման ամսաթիվը սահմանված է 2027 թվականի սեպտեմբերի 30-ը:
- **ՏՏԵՁ (LEID)** - “Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման” Ծրագիր, որը ֆինանսավորվում է ՎԶՄԲ-ի և ՀՀ-ի միջև 23.02.2016թ. կնքված IBRD Loan Number 8572-AM վարկային համաձայնագրով՝ 55,000,000 USD գումարի չափով: Ծրագրի նպատակն է Հայաստանի ընտրված մարզերում (Կոտայք, Վայոց Ձոր, Սյունիք, Լոռի, Արմավիր, Արարատ) տեղական տնտեսության մեջ զբոսաշրջության ավելի մեծ մասնակցության համար ենթակառուցվածքային ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը: Մասնավորապես, Ծրագիրը աջակցում է բիզնես և ներդրումային միջավայրին՝ Փոքր և Միջին Ձեռնարկություններ (ՓՄՁ) ստեղծման, աճի, նորարարությունների համար: Ծրագիրն ուժի մեջ է մտել 29.12.2016թ.-ին: Ծրագրի հետ կապված աշխատանքները սկսվել են 21.04.2017թ.-ից: ՎԶՄԲ Վարկային համաձայնագիր 8572-AM վարկի ֆինանսավորման ավարտը սահմանված է 31.12.2024թ.-ը:
- **USAID** – “Տեղական կառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների” Ծրագիր, որը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային Ջարգացման Գործակալության (USAID) և ՀՀ Կառավարության միջև կնքված պայմանագրի՝ 7,980,000 USD գումարի չափով, որից ԱՄՆ ՄԶԳ կողմից 6,000,000 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 1,980,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակն է խոշորացված համայնքների, համայնքների ավագանիների և համայնքապետարանների կարևորագույն համակարգերի և կարողությունների զարգացումը: Ծրագրի մեկնարկել 2022թ. դեկտեմբերի 1-ին և նախատեսվում է ավարտին հասցնել 2027թ. նոյեմբերի 30-ին:
- **ՈՀԱԾ (ISMP)** - Եվրասիական զարգացման բանկի (EDB) աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագիրն իրականացվում է 16.10.2015թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 2016թ. հունիսի 10-ին: Ծրագրի նպատակն է Ոռոգման ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում, այդ թվում մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսով, մայր ելվ երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնման և կառուցման աշխատանքներ, հիմնադրվող ցանցերի երկարությունը՝ 344,32 կմ, նոր կառուցվող ոռոգման ցանցերի երկարությունը՝ 67,18 կմ: Ծրագրի փակման ամսաթիվը վերանայվել և երկարաձգվել է մինչև 30.06.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

- **Վեդի (VEDI)** - Զարգացման ֆրանսիական գործակալության (AFD) աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման ծրագիրն իրականացվում է 26.01.2016թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 2016թ. մայիսի 12-ին: Ծրագրի նպատակն է Վեդիի ջրամբարի/պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրառ հանգույցների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի, ինչպես նաև ջրամբարից ոռոգման ենթակա հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցում, որի արդյունքում ակնկալվում է Վեդի և Խոսրով գետերի վրա ջրառի ջրաթափ կառույցը և ջրի փոխադրող համակարգի կառուցում՝ 10,6 կմ, ոռոգման համակարգի կառուցում՝ 36,2 կմ, ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում՝ 60 կմ և ջրամբարի պատվարի կառուցում՝ 80 մ: Ծրագրի փակման ամսաթիվը վերանայվել և երկարաձգվել է մինչև 2025թ. մարտի 31-ը:
- **ԶՌՀԿ (IWRM)** - Վերակառուցման վարկերի բանկի (KfW) աջակցությամբ իրականացվող «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ԶՌՀԿ)/Ախուրյան գետ, փուլ 1» BMZ-No. 2014.67.950 ծրագիրն իրականացվում է 19.12.2014թ. ստորագրված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 29.06.2015թ.: Ծրագրի նպատակն է Կապսի ջրամբարի կառուցում, կառուցվող պատվարի բարձրություն - 30 մ: Ծրագրի փակման և վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետը 30.06.2024թ.: Նախատեսվում է ծրագրի վերջնաժամկետը երկարացնել:
- **ՀԵԾ-II Փուլ 2, 3 (CIP II-P2,P3)** - «Համայնքային ենթակառուցվածքների II ծրագիր, փուլ 3 - Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» BMZ N 2013 66 343 ծրագիր: Ծրագրի նպատակն է 11 քաղաքների և 41 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ (մասնակի) վերականգնման աշխատանքների և 560 գյուղական բնակավայրերից ընտրված որոշ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հատվածների հրատապ վերականգնման աշխատանքների իրականացում: Իրականացվում է Վերակառուցման վարկերի բանկի աջակցությամբ 27.12.2013թ. կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 21.06.2014թ., Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ, որն ուժի մեջ է մտել 27.06.2014թ., ինչպես նաև Վերակառուցման վարկերի բանկի և Եվրամիության հարևանության գործիքի (ԵՄ ՀՆԳ) աջակցությամբ 14.05.2014թ. կնքված ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 21.06.2014թ.: Վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետը վերանայվել և երկարաձգվել է մինչև 30.12.2025:
- **ԵԶԲԾ (YWIP)** - Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագիր, որն իրականացվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական ներդրումային բանկի (EIB) և ԵՄ Հարևանության ներդրումային ծրագրի (EU NIF) աջակցությամբ: EIB ֆինանսական պայմանագիրը ստորագրվել է 27.06.2014թ.-ին և ուժի մեջ է մտել 05.02.2015թ.: Ավարտման ամսաթիվը երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 23-ը: ԵՄ NIF ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրվել է 06.08.2014-ին և ուժի մեջ է մտել 04.11.2014-ին: Ավարտման ամսաթիվը 31.12.2025թ.:
- **Կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերը ներառում են՝**
 - ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2093-Ն որոշմամբ սահմանված «Մինչև 2026 թվականը կառուցվելիք, կապիտալ վերանորոգվելիք կամ վերակառուցվելիք 300 դպրոց» ծրագրի 1-ին հավելվածում ընդգրկված դպրոցների և կրթական համալիրների կառուցման/վերանորոգման նախագծերի իրականացում՝ մասնավորապես այդ որոշմամբ ՀՏՁ2-ին հատկացված դպրոցների համար:
 - ՀՀ կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1581-Ն որոշմամբ սահմանված «Մինչև 2026 թվականը կառուցվելիք, կապիտալ վերանորոգվելիք կամ վերակառուցվելիք 500 մանկապարտեզներ և նախադպրոցական հաստատություններ» ծրագրի 1-ին հավելվածում ընդգրկված մանկապարտեզների շինարարական նախագծերի իրականացում՝ մասնավորապես այդ որոշմամբ ՀՏՁ2-ին հատկացված մանկապարտեզների համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

- Սյունիքի, Լոռու և Կոտայքի մարզերում արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցերի, օրական կարգավորվող երկու ջրամբարների և պոմպակայանի կառուցման ենթածրագրեր:
- Գեղարքունիքի մարզի Վարսեր բնակավայրի տարածքում Սևան քաղաքի կոյուղու կոլեկտորի վնասված հատվածի վերականգնման ծրագիր:
- Մարզադպրոցների և «Workout» տիպի մարզահրապարակների կառուցման աշխատանքներ ՀՀ տարբեր մարզերում:
- «ԱԵԴԱՑԻԱ» մաքրման կայանի սպասարկման համար պարեկային ծառայության ձեռքբերման ծրագիր:
- Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի պոլիկլինիկայի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման ծրագիր:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Պատրաստման հիմունքներ

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՄ-ներ) պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն՝ ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Հիմնադրաման առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՄ 7-ի և ՖՀՄՄ 7-ի փոփոխություններ)

2023 թվականի մայիսի 25-ին ՀՀՄՄԽ-ն հրապարակեց Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունները, որոնք փոփոխեցին ՀՀՄՄ 7-ը «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն», և ՖՀՄՄ 7-ը «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» (Փոփոխություններ): Այս փոփոխություններն առաջացել են մատակարարման շղթայի ֆինանսավորման պայմանավորվածություններից և համապատասխան բացահայտումներից բխող պարտավորությունների և դրա հետ կապված դրամական միջոցների հոսքերի ներկայացման պահանջների վերաբերյալ ՖՀՄՄ-ների մեկնաբանությունների կոմիտե (Կոմիտե) ներկայացված դիմումի հետևանքով: 2020 թվականի դեկտեմբերին Կոմիտեն հրապարակեց օրակարգային որոշում (Մատակարարման շղթայի ֆինանսական պայմանավորվածություններ – հակադարձ ֆակտորինգ), որն անդրադարձավ այս դիմումին՝ հիմնվելով ՖՀՄՄ-ի հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների վրա, որոնք առկա էին այդ ժամանակ: Այս գործընթացի ընթացքում շահագրգիռ կողմերի հետադարձ կապը բացահայտեց սահմանափակումներ այդ պահին առկա պահանջներում, որոնք վերաբերում են օգտագործողների կարևոր տեղեկատվական կարիքներին՝ հասկանալու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների ազդեցությունը կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա և համեմատելու մի կազմակերպությունը մյուսի հետ:

Ի պատասխան այս հետադարձ կապին՝ ՀՀՄՄ-ն ձեռնարկեց նեղ կիրառման ստանդարտի մշակումը, որը հանգեցրեց փոփոխությունների: Փոփոխությունները պահանջում են, որ կազմակերպությունները տրամադրեն որոշակի հատուկ բացահայտումներ (որակական և քանակական)՝ կապված մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների հետ: Փոփոխությունները նաև պարունակում են ուղեցույց մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների բնութագրերի վերաբերյալ:

Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՄ 16-ի փոփոխություն)

ՖՀՄՄ-ի մեկնաբանությունների կոմիտեն 2020 թվականի հունիսին հրապարակեց իր օրակարգային որոշումը՝ Վաճառք և հետադարձ վարձակալություն փոփոխական վճարումներով: Այս հարցը փոխանցվել է ՀՀՄՄ-ին որոշ ասպեկտների վերաբերյալ ստանդարտներ սահմանելու համար: ՀՀՄՄ-ն վերջնական փոփոխությունները հրապարակել է 2022 թվականի սեպտեմբերին:

Փոփոխություններով վաճառող-վարձակալից պահանջվում է որոշել «վարձավճարները» կամ «վերանայված վարձավճարները» այնպես, որ վաճառող-վարձակալը չճանաչի շահույթ կամ վնաս, որը վերաբերում է վաճառող-վարձակալի կողմից պահպանված օգտագործման իրավունքին:

Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՄ 1-ի փոփոխություն)

2020 թվականի հունվարին ՀՀՄՄ Խորհուրդը փոփոխություններ է կատարել ՀՀՄՄ 1-ում /Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ/, որոնք հետագայում մասամբ փոփոխվել են 2022 թվականի հոկտեմբերին թողարկված «Կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ» փոփոխություններով: Փոփոխությունները պահանջում են, որ պարտավորության մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն տասներկու ամսով հետաձգելու կազմակերպության իրավունքը պետք է հիմնավորված լինի և գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Պարտավորության դասակարգումը կախված չէ այն հավանականությունից, որ կազմակերպությունը կկիրառի մարումը հետաձգելու իր իրավունքը հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն տասներկու ամսով:

COVID-19 համաճարակի պատճառով Խորհուրդը մեկ տարով հետաձգել է փոփոխությունների ուժի մեջ մտնելը 2024 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1-ի փոփոխություն)

ՀՀՄՄ 1-ի /«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»/ փոփոխությունների թողարկումից հետո ՀՀՄՄ-ն 2022 թվականի հոկտեմբերին լրացուցիչ փոփոխություններ կատարեց ՀՀՄՄ 1-ում: Եթե կազմակերպության հետաձգման իրավունքը կախված է կազմակերպության կողմից սահմանված պայմանների կատարումից, ապա այդ պայմաններն ազդում են այն հանգամանքի վրա, թե արդյոք այդ իրավունքը գոյություն ունի հաշվետու ժամանակաշրջանի վերջում, եթե կազմակերպությունից պահանջվում է կատարել պայմանը հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կամ դրանից առաջ, և չեն ազդում այն հանգամանքի վրա, թե արդյոք կազմակերպությունից պահանջվում է կատարել պայմանները հաշվետու ժամանակաշրջանից հետո: Փոփոխությունները նաև հստակեցնում են «կարգավորում» տերմինի նշանակությունը պարտավորությունը ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Այս փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններին վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Մի շարք նոր ստանդարտներ ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը: Սակայն, Հիմնադրամը վաղաժամկետ չի ընդունել նոր կամ փոփոխված ստանդարտները այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՄ 21-ի փոփոխություն)

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՄ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՄ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխություններն առաջացել են ՖՀՄՄ Մեկնաբանությունների կոմիտե ներկայացված դիմումի հետևանքով՝ կապված փոխարժեքի որոշման հետ, երբ առկա է փոխանակման հնարավորության երկարատև բացակայություն: Նախքան փոփոխությունները ՀՀՄՄ 21-ը չէր ներառում հստակ պահանջներ փոխարժեքի որոշման համար, երբ արժույթը փոխարկելի չէր այլ արժույթի, ինչը գործնականում հանգեցրեց տարաձայնությունների: Կոմիտեն առաջարկեց, որպեսզի ՀՀՄՄ Խորհուրդը մշակի ՀՀՄՄ 21-ի նեղ շրջանակի փոփոխություններ՝ այս խնդիրը լուծելու համար: Հետագա քննարկումներից հետո ՀՀՄՄ Խորհուրդը 2021 թվականի ապրիլին հրապարակեց ՀՀՄՄ 21-ի առաջարկվող փոփոխությունների նախագիծը, իսկ վերջնական փոփոխությունները հրապարակվեցին 2023 թվականի օգոստոսին: Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սիմոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

Հետևյալ փոփոխությունները ուժի մեջ կմտնեն 2026 թվականի հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար:

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՄ 9-ի և ՖՀՄՄ 7-ի փոփոխություններ)

Ի պատասխան ՖՀՄՄ-ների մեկնաբանությունների կոմիտեին ուղղված հարցերին և իրագործումից հետո ՖՀՄՄ 9 «Ֆինանսական գործիքների» դասակարգման և չափման պահանջների իրականացված վերանայումից բխող հարցերին՝ 2024 թվականի մայիսին ՀՀՄՄ-ն հրապարակեց ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ կատարված փոփոխությունները: Փոփոխությունները փոխում են ՖՀՄՄ 9-ի և ՖՀՄՄ 7-ի հետևյալ պահանջները:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում

- Էլեկտրոնային փոխանցումների միջոցով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

- տոկոսային տարրեր հասարակ վարկային պայմանագրում (մայր գումարի վճարումներ և տոկոսների գնահատում – «SPPI թեստ»)
- Պայմանագրային պայմաններ, որոնք փոխում են պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ չափը
- Առանց ետընթացության իրավունքի ֆինանսական ակտիվներ գործառույթներով
- Ներդրումներ պայմանագրային կապակցված գործիքներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բացահայտումներ

- Ներդրումներ բաժնային գործիքներում, որոնք չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով:
- Պայմանագրային պայմաններ, որոնք կարող են փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետը կամ գումարը:

Փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ այն հարցի վրա, թե ինչպես են կազմակերպությունները հաշվառում ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը և ինչպես են դասակարգվում ֆինանսական ակտիվները: Փոփոխությունները թույլ են տալիս կազմակերպությանը վաղաժամկետ ընդունել միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և հարակից բացահայտումների հետ կապված փոփոխությունները և կիրառել մնացած փոփոխությունները ավելի ուշ: Սա հատկապես օգտակար կլինի այն կազմակերպությունների համար, որոնք ցանկանում են վաղաժամկետ ընդունել փոփոխություններն այնպիսի ֆինանսական գործիքների համար, որոնք ունեն ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարման) կամ նմանատիպ բնութագրեր:

ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների տարեկան բարելավումներ

